**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՐԵՎԱՆԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2014 թվականի հունիսի 24-ին՝ Երեւանում եւ 2014 թվականի հունիսի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Երեւանի ջրամատակարարման բարելավում» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապե-

պության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Ֆինանսական պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2014 թվականի հունիսի 24-ին եւ նույն թվականի հունիսի 27-ին՝ համապատասխանաբար Երեւանում եւ Լյուքսեմբուրգում, որի նպատակն է Պայմանագրով նախատեսված ծրագրին համապատասխան Երեւանի ջրամատակարարման բարելավման համար Եվրոպական ներդրումային բանկի կողմից (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ՝ Վարկառու) տրամադրել 5.167.195.69 եվրո (7.000.000 ԱՄՆ դոլար) գումարի չափով վարկ՝ առավելագույնը թվով 5 տրանշներով (մասնաբաժիններով): Բացի դրանից, հիշյալ ծրագրի կատարմանն է ուղղվելու նաեւ Եվրոպական հանձնաժողովի կողմից տրամադրվելիք 5.500.000 եվրո գումարի չափով ներդրումային դրամաշնորհը: Վարկի տոկոսադրույքը կարող է լինել հաստատագրված կամ լողացող, որը որոշվում է Պայմանագրի 3-րդ հոդվածում սահմանված կարգով:

Պայմանագրով ֆինանսավորվող ծրագրի կատարման ժամանակահատվածը 2015 թվականի մարտի 1-ից մինչեւ 2018 թվականի մարտի 1-ն է:

2. Պայմանագիրը բաղկացած է թվով 5 հավելվածներից, որոնցում մանրամասնված են իրականացվելիք ծրագրի տեխնիկական նկարագրությունը, վարկի դիմաց վճարվելիք տոկոսադրույքների հաշվարկման հետ կապված ընթացակարգերը, ինչպես նաեւ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ այլ իրավադրույթներ:

3. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- գրավոր տեղեկացնել Բանկին վարկային հաշվին հատկացման կատարման մասին՝ ոչ ուշ, քան ժամանակացույցով հատկացման սահմանված ամսաթվից 15 օր

առաջ, ինչպես նաեւ հաստատել, որ Բանկի վարկային հաշիվը Հայաստանի Հանրապետության սեփական բանկի հաշիվն է (1-ին հոդված, 1.02.Դ),

- եթե Հայաստանի Հանրապետության գրավոր հարցման դեպքում Բանկը հետաձգում է ընդունված փրանշի ցանկացած հատկացումը մասամբ կամ ամբողջությամբ, մինչեւ Հայաստանի Հանրապետության կողմից նշված ամսաթիվը, վճարել հետաձգման փոխհատուցում, որը հաշվարկվում է հետաձգված հատկացման գումարի հիման վրա (1-ին հոդված, 1.05.Ա),

- վճարել Բանկին կանխավճարի փոխհատուցում այն դեպքում, երբ Բանկը չեղյալ է հայտարարում ֆիքսված տոկոսադրույքով փրանշը (1-ին հոդված, 1.06. Գ., բ) կետ, i) ենթակետ),

- կատարել փոխհատուցում Բանկին 10.03-րդ հոդվածով սահմանված կարգով, այն դեպքում, երբ Բանկը չեղյալ է հայտարարում ընդունված փրանշը պարտավորության չկատարման դեպքի առաջացման պատճառով (1-ին հոդված, 1.06. Գ., բ) կետ, ii) ենթակետ),

- Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 15 օրվա ընթացքում վճարել գնահատման վճար (50.000 եվրո) կամ երաշխավորել դրա վճարումը Բանկին, որը կատարվում է ծրագրի հետ կապված՝ Բանկի կողմից իրականացված գնահատման դիմաց (1-ին հոդված, 1.08),

- ԱՄՆ դոլարով վճարել յուրաքանչյուր փրանշի համար տոկոսներ, հետվճարումներ եւ այլ գանձումներ (2-րդ հոդված, 2.02),

- տոկոսի վճարումը կատարել մասերով ֆիքսված տոկոսադրույքով յուրաքանչյուր փրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ ֆիքսված տոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով (3-րդ հոդված, 3.01.Ա),

- տոկոսի վճարումը կատարել մասերով եւ այն ժամանակահատվածում, որը սահմանված է պայմանագրի 3-րդ հոդվածի 3.01.Բ. բաժնում,

- յուրաքանչյուր փրանշ հետ վճարել մասնաբաժիններով եւ հատկացման առաջարկում սահմանված ամսաթվերին (4-րդ հոդված, 4.01.Ա),

- Բանկին վճարել կանխավճարի փոխհատուցումը կանխավճարի ամսաթվին, ֆիքսված տոկոսադրույքով փրանշի առնչությամբ, որը նախապես վճարվում է այն դեպքում, երբ Վարկառուն նախօրոք վճարում է ֆիքսված տոկոսադրույքով փրանշը (4-րդ հոդված, 4.02.Բ., 1) կետ),

- կանխավճարի հետ միաժամանակ վճարել նաեւ կանխավճարի գումարի կուտակված տոկոսները եւ, առկայության դեպքում, փոխհատուցման տույժի գումարը (4-րդ հոդված, 4.02.Գ),

- տրանշի համար համապատասխան վճարման ամսաթվից տարբերվող որեւէ այլ ամսաթվին կանխավճար կատարելու դեպքում փոխհատուցել Բանկին վերջինիս կողմից սահմանված գումարի այնպիսի չափով, որը պահանջվում է փոխհատուցել իրեն այն միջոցների ստացման համար, որոնք ստացվել են վճարման ամսաթվին ոչ համապատասխան (4-րդ հոդված, 4.04),

- վարկի շրջանակներում փոխառած բոլոր գումարներն օգտագործել ծրագրի իրականացման նպատակով (6-րդ հոդված, 6.01),

- ծրագիրն իրականացնել տեխնիկական նկարագրության համաձայն, որը Բանկի հաստատմամբ կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխությունների ենթարկվել եւ երաշխավորել ծրագրի ավարտը նշված վերջնաժամկետում (6-րդ հոդ-ված, 6.02),

- երաշխավորել, որ ծրագրի իրականացման նպատակով եւ դրա հետ կապված սարքավորումները ձեռք են բերված, ծառայությունների մատուցումն ապահովված է, եւ աշխատանքները պատվիրված են միջազգային բաց մրցույթների կամ այլ ընդունելի գնումների ընթացակարգերի միջոցով (6-րդ հոդված, 6.04),

- ապահովել Պայմանագրի 6-րդ հոդվածի 6.05 բաժնում ամրագրված շարունակական պարտավորությունների կատարումը (6-րդ հոդված, 6.05),

- հավաստիացնել եւ երաշխավորել Բանկին, որ կպահպանվեն Պայմանագրի 6-րդ հոդվածի 6.07 բաժնում նշված պայմանները,

- ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք Բանկը ողջամտորեն պա-հանջում է ծրագրի առնչությամբ ենթադրյալ կամ կասկածելի ցանկացած արգելված վարքագիծ հետաքննելու կամ վերացնելու համար (6-րդ հոդված, 6.09, ա) կետ, ii) ենթակետ),

- ապահովել, որ ծրագրի ծախսերն ամբողջությամբ ծածկելու համար (ներառյալ պարտքի սպասարկման ծախսերը, սակայն բացառելով ակտիվների արժեզրկումը) ցանկացած սակագնային բարձրացում հաստատվի ՀՀ համա-պատասխան մարմինների կողմից՝ այն պայմանով, որ սակագները մնան մատչելիության սահմաններում (6-րդ հոդված, 6.12),

- վարել համապատասխան հաշվեմատյաններ ու գրանցամատյաններ, որոնցում ամբողջությամբ եւ ճշգրտորեն կարտացոլվեն բոլոր ֆինանսական

գործարքները, այդ թվում՝ ծրագրի հետ կապված ծախսերը (6-րդ հոդված, 6.14., բ) կետ),

- վճարել բոլոր հարկերը, տուրքերը, վճարները եւ ցանկացած բնույթի այլ պարտադիր վճարները, ներառյալ պետական տուրքը եւ գրանցման վճարները, որոնք ծագում են Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի կատարումից կամ իրականացումից (9-րդ հոդված, 9.01),

- հատուցել եւ Բանկին զերծ պահել որեւէ կորստից, որը հետեւանք է Հայաստանի Հանրապետության կողմից կատարված որեւէ վճարման կամ մասնակի մարման, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի հստակ սահմանված ձեւից տարբերվող ձեւով՝ չսահմանափակելով Պայմանագրի կամ կիրառելի իրավունքի ներքո Բանկի որեւէ իրավունք (9-րդ հոդված, 9.03, բ) կետ),

- Բանկի կողմից գրավոր պահանջ ներկայացվելու դեպքում անմիջապես հետ վճարել Վարկը՝ ամբողջությամբ կամ մասամբ՝ Պայմանագրի ներքո կուտակված տոկոսների կամ այլ չվճարված գումարների հետ միասին՝ համաձայն Պայմանագրի 10-րդ հոդվածի 10.01 բաժնում ամրագրված դրույթների (10-րդ հոդված, 10.01),

- ֆիքսված տոկոսադրույքով տրանշի մասով՝ Պայմանագրի 10.01-րդ հոդվածի ներքո ցանկացած պահանջի դեպքում Բանկին վճարել պահանջվող գումարը կանխավճարի փոխհատուցման հետ միասին՝ցանկացած հիմնական գումարի մասով, որը ենթակա է նախապես վճարման (10-րդ հոդված, 10.03.Ա),

- լողացող տոկոսադրույքով տրանշի մասով՝ Պայմանագրի 10.01-րդ հոդվածի ներքո ցանկացած պահանջի դեպքում Բանկին վճարել պահանջվող գումարը՝ ընթացիկ արժեքի 0.15%-ին համարժեք գումարի հետ միասին, որը տարեկան կտրվածքով հաշվարկվում եւ կուտակվում է վճարման ենթակա գումարի վրա, որը պետք է նախապես վճարվի այնպես, ինչպես այն տոկոսը, որը կհաշվարկվեր եւ կկուտակվեր, եթե այդ գումարը մնար չմարված՝ տրանշի մարման ժամանակացույցին համապատասխան, մինչեւ մարման ամսաթիվը (10-րդ հոդված, 10.03.Բ),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը Պայմանագրի ներքո իր իրավունքներից կամ պարտավորություններից որեւէ մեկը չհանձնի կամ չփոխանցի՝ առանց Բանկի կողմից նախապես ստացված գրավոր համաձայնության (12-րդ հոդված, 12.03):

4. Պայմանագրում նախատեսված են նաեւ կողմերի իրավունքների ու պարտականությունների պատշաճ կատարումն ապահովող այլ դրույթներ, ինչպես նաեւ Պայմանագիրը գործողության մեջ դնելու ընթացակարգեր:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ սոցիալական բնագավառում դրված սահմանադրաիրավական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

**1.** Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2014 թվականի հունիսի 24-ին՝ Երեւանում եւ 2014 թվականի հունիսի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Երեւանի ջրամատակարարման բարելավում» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1179